Կազմողի կողմից

1967-ից մինչ այժմ իմ նախաձեռնությամբ լույս ընծայվեցին «Էսթետիկայի հարցեր» ընդհանուր վերնագրով 5 գիրք հոդվածների ժողովածուներ, որոնցում տարբեր հեղինակների կողմից լուսաբանվում էին գեղագիտության տեսության և պատմության (այդ թվում և հայկական) հարցեր: 1974-ից նույնպես մինչ այժմ մեր կողմից նախապատրաստվեցին և հրատարակվեցին «Հայ էսթետիկական մտքի պատմությունից» ընդհանուր վերնագրով նաև 8 գիրք հոդվածների ժողովածուներ՝ ամբողջությամբ նվիրված հայ էսթետիկայի պատմությանը:

Սակայն անցյալ դարի 90-ական թթ. սկսված գնալով դժվարանում էր ապահովել այդ գրքաշարի հրատարակությունը այն պատճառով, որ մի կողմից կտրուկ ձևով կրճատվում էր գեղագիտության տեսության պատմության և տեսության հարցերով զբաղվող մասնագետների թիվը, և մյուս կողմից՝ ընդհատվեց նոր կադրերի հոսանքը:

Ելնելով ստեղծված իրավիճակից հնարավոր համարեցինք միացնել երկու գրքաշարը «Էսթետիկայի հարցեր» վերնագրի տակ, որտեղ բացի գեղագիտության տեսության և ընդհանուր պատմության հարցերից առանձին բաժնով կներկայացվի հայ գեղագիտական մտքի պատմությունը՝ իհարկե համապատասխան նյութերի առկայության դեպքում:

Յա.Ի.Խաչիկյան